ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՆԵՐՍԻՍՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ Հ. ՄՈՐԳԵՆԹԱՈՒԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՀՈՂԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

Սույն թվականի ապրիլի 23-ին Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյանը մասնակցեց Երևանում, Եղեռնի հուշարձանի մոտ, տեղի ունեցած Հենրի Մորգենթաուի գերեզմանահողի տեղափոխության և հուշարձանին կից հուշապատի մեջ զետեղման արարողությանը, որը կազմակերպել էր Գիտությունների Ազգային Ակադեմիան:

Հենրի Մորգենթաուն (1856-1946 թթ.) ամերիկյան դիվանագետ էր և գործարար: Մասնագիտությամբ իրավաբան էր: 1913-1916 թթ. ԱՄՆ-ի դեսպանն էր Թուրքիայում, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո պաշտպանել է նաև Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իտալիայի, Բելգիայի շահերը Օսմանյան կայսրությունում: 1915 թվականից Մերձավոր Արևելքում Ամերիկյան Օգնության կոմիտեի (Ամերկոմ) փոխնախագահն էր: Մեծ եղեռնի օրերին, հանդիպելով Թալեաթ և Էնվեր փաշաների հետ, ապարդյուն կերպով փորձել է կանխել արևմտահայության տեղահանությունն ու կոտորածը: Իր հուշագրություններում Հ. Մորգենթաուն փաստական մանրամասնություններով նկարագրել է արևմտահայության ողբերգությունը՝ այն համարելով պատմության ամենասարսափելի էջերից մեկը:

Արարողությանը ներկա էին նաև Ազգային Ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանը, Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան Մայքլ Լեմոնը, ինչպես նաև՝ Մորգենթաուի թոռը, երկու ծոռները և օտարերկրյա հյուրեր: Նախ քացման խոսքով հանդես եկավ ակադեմիկոս Գ. Բյուտյանը: Ապա հաջորդեցին պրն. Խոսրով Հարությունյանի և հրավիրվածներից մի քանիսի խոսքերը՝ նվիրված Մորգենթաուի հիշատակին: Վերջում իր սրտահույզ շնորհակալական խոսքով հանդես եկավ Մորգենթաուի թոռը:

Արարողության ավարտին, Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյանի հանդիսադրությամբ և երեք քահանաների ու երկու սարկավագների մասնակցությամբ, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն: